

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՇԱԿՆԵՐԻ ՍԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը

1. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը (այսուհետ՝ համակարգ) ներառում է՝

- 1) պետական կենսաթոշակային ապահովությունը,
- 2) պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը,
- 3) կամավոր կենսաթոշակային ապահովագրությունը:

2. Պետական կենսաթոշակային ապահովությանը, պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին և կամավոր կենսաթոշակային ապահովագրությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով:

3. Պետական կենսաթոշակային ապահովությունը պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում և կարգով երաշխավորում է անձանց սոցիալական ապահովությունը (այսուհետ՝ նաև պետական կենսաթոշակային համակարգ):

4. Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը օրենքով սահմանված կարգով կատարված պարտադիր կուտակային վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին, անձանց տարիքային կենսաթոշակի տարիքը լրանալու դեպքում, ապահովում է կուտակային կենսաթոշակով:

5. Կամավոր կենսաթոշակային ապահովագրությունը կամավոր կուտակային վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների կամ ապահովագրական վճարների հաշվին, անձանց տարիքային կենսաթոշակի տարիքը լրանալու դեպքում, ապահովում է լրացուցիչ եկամտով (կենսաթոշակով):

Հոդված 2. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները, պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ նշանակելու պայմանները, նշանակելու և վճարելու կարգը:

2. Հայաստանի Հանրապետության օրենքով քաղաքացիների առանձին խմբերի համար կարող են սահմանվել պետական կենսաթոշակային ապահովության այլ նորմեր, քան սահմանված են սույն օրենքով:

Հոդված 3. Պետական կենսաթոշակային ապահովության իրավական կարգավորումը

Պետական կենսաթոշակային ապահովության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 4. Պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքները

Պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքներն են՝

1) կենսաթոշակի իրավունքի ապահովումը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից.

2) պետական կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության և զարգացման ապահովումը.

3) սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության ապահովումը.

4) պետության երաշխավորած կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի կենսաթոշակի նվազագույն չափի ապահովումը:

Հոդված 5. Կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ նաև լիազոր մարմին) լիազորությունները սահմանվում են օրենքով:

Հոդված 6. Կենսաթոշակ վճարելու միջոցները

Սույն օրենքով սահմանված կենսաթոշակները վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Հոդված 7. Կենսաթոշակի իրավունքը

1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի յուրաքանչյուր անձ, ով բավարարում է սույն օրենքով սահմանված պայմաններին:

2. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք ունի կենսաթոշակի իրավունք ունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձը, ով օրենսդրությամբ սահմանած կարգով դիմել է լիազոր մարմին և նրան նշանակվել է կենսաթոշակ (այսուհետ՝ կենսաթոշակառու):

3. Սույն օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով սահմանված՝ պետական բյուջեից ֆինանսավորվող տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին իր ընտրությամբ նշանակվում է մեկ կենսաթոշակ:

4. Սույն օրենքով սահմանված աշխատանքային կամ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձին չի կարող նշանակվել սոցիալական կենսաթոշակ:

Հոդված 8. Կենսաթոշակի տեսակները

Սույն օրենքով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները.

1. աշխատանքային՝

- 1) տարիքային,
- 2) արտոնյալ պայմաններով,
- 3) երկարամյա ծառայության,
- 4) հաշմանդամության,
- 5) կերակրողին կորցնելու դեպքում,
- 6) մասնակի.

2. զինվորական՝

- 1) երկարամյա ծառայության,
- 2) հաշմանդամության,
- 3) կերակրողին կորցնելու դեպքում.

3. սոցիալական՝

- 1) ծերության,
- 2) հաշմանդամության,
- 3) կերակրողին կորցնելու դեպքում:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հոդված 9. Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի.

1) 25 տարվա աշխատանքային ստաժ, որը պահանջվող աշխատանքային ստաժն է, կամ

2) առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ, որը նվազագույն աշխատանքային ստաժն է:

2. Մինչև 2016 թվականը անձի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող նվազագույն աշխատանքային ստաժը սահմանվում է ըստ հետևյալ սանդղակի.

Կենսաթոշակի անցնելու տարեթիվը	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
Պահանջվող աշխատանքային ստաժը	6 տարի	7 տարի	8 տարի	9 տարի	10 տարի

4. Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ տարիքային կենսաթոշակ նշանակվում է, եթե անձն ունի առնվազն 35 տարվա աշխատանքային ստաժ և չի աշխատում:

5. Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ նշանակելու համար կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ:

6. Տարիքային աշխատանքային կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Հոդված 10. Արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ (թիվ 1 ցուցակով) նշանակվում է 55 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 15 տարին աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Կանանց, մինչև սույն մասով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալը, կենսաթոշակ է նշանակվում ըստ հետևյալ սանդղակի.

Ծննդյան տարեթիվ	Տարիք	Կենսաթոշակի անցնելու տարեթիվ
01.07.1958 - 31.12.1958	53	2011
01.01.1959 - 30.06.1959	53,5	2012
01.07.1959 - 31.12.1959	54	2013
01.01.1960 - 30.06.1960	54,5	2014
01.07.1960 - 31.12.1960	55	2015
և հետո		

2. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ (թիվ 2 ցուցակով) նշանակվում է 59 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Կանանց, մինչև սույն մասով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալը, կենսաթոշակ է նշանակվում ըստ հետևյալ սանդղակի.

Ծննդյան տարեթիվ	Տարիք	Կենսաթոշակի անցնելու տարեթիվ
01.07.1953 - 31.12.1953	58	2011
01.01.1954 - 30.06.1954	58,5	2012
01.07.1954 - 31.12.1954	59	2013
և հետո		

3. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 45 տարին լրացած և առնվազն 20 տարվա աշխատանքային ստաժ ունեցող՝ հիպոֆիզարային թզուկությամբ հիվանդ (լիվիպոտ) անձին:

4. Սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով սահմանված կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների թիվ 1 և թիվ 2 ցուցակները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

Հոդված 11. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է քաղաքացիական ավիացիայի.

1) թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմի անդամին, եթե լրացել է նրա 45 տարին, և նա ծառայել է առնվազն 25 տարի, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձին՝ եթե նա ծառայել է առնվազն 20 տարի.

2) բորտօպերատորին և բորտուղեկցորդին՝ եթե լրացել է նրանց 45 տարին, և նրանք ծառայել են առնվազն 25 տարի, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձին՝ եթե նա ծառայել է առնվազն 20 տարի.

3) օդային երթևեկության կառավարումն իրականացնող ծառայության անձնակազմի՝ կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող անդամին՝ եթե լրացել է նրա 50 տարին, և նա ծառայել է առնվազն 25 տարի, որից առնվազն 15 տարին անմիջականորեն կատարել է օդային երթևեկության կառավարման աշխատանք, իսկ առողջական վիճակի պատճառով օդային երթևեկության անմիջական կառավարման աշխատանքից ազատված անձին՝ եթե լրացել է նրա 50 տարին, և նա ծառայել է առնվազն 25 տարի, որից 10 տարին անմիջականորեն կատարել է օդային երթևեկության կառավարման աշխատանք.

4) ինժեներատեխնիկական անձնակազմի անդամին՝ եթե լրացել է նրա 55 տարին, և նա ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից 20 տարին կատարել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

2. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

3. Սույն հոդվածով սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքների, պաշտոնների ցանկը և երկարամյա ծառայության ստաժը հաշվառելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հողված 12. Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին՝

1) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ անկախ աշխատանքային ստաժից.

2) ընդհանուր հիվանդության, մանկուց հիվանդության, բնական, տեխնածին և այլ աղետների հետևանքով հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ եթե հաշմանդամություն սահմանելու ժամանակ անձն ունեցել է հետևյալ աշխատանքային ստաժը.

Տարիքային խումբը	Աշխատանքային ստաժը
մինչև 23	2 տարի
23 - 26	3 տարի
26 - 29	4 տարի
29 - 32	5 տարի
32 - 35	6 տարի
35 - 38	7 տարի
38 - 41	8 տարի
41 - 44	9 տարի
44-ից բարձր	10 տարի

2. Հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Հողված 13. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է մահացած կերակրողի ընտանիքի հետևյալ անդամներին.

ա) 18 տարին չլրացած երեխային.

բ) 18 տարին չլրացած եղբորը, քրոջը և թոռանը, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում.

գ) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակին, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը, ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում և չի աշխատում.

դ) տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողներին, ամուսնուն, եթե չեն աշխատում.

ե) ամուսնուն կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամի, կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձին՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (գոհված) կերակրողի 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով և չի աշխատում.

զ) պապին և տատին, եթե նրանք չեն աշխատում և չունեն զավակներ կամ զավակներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

Սույն հողվածի առաջին մասի «ա», «գ» և «դ» կետերում նշված անձանց կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվում՝ անկախ մահացած կերակրողի խնամքի տակ եղած լինելու հանգամանքից:

2. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անչափահասն այդ իրավունքը պահպանում է նաև որդեգրվելու դեպքում:

3. Որդեգրողը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունի հարազատ ծնողին հավասար, իսկ որդեգրվածը՝ հարազատ երեխային հավասար:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող որդեգրվածը որդեգրողի մահվան դեպքում կենսաթոշակի ընտրության իրավունք ունի:

4. Խորթ հայրը և խորթ մայրը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն հորը և մորը հավասար, եթե մահացած խորթ որդուն կամ խորթ դստերն անչափահաս տարիքում խնամել են առնվազն 5 տարի:

Խորթ որդին և խորթ դուստրը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն հարազատ որդուն և դստերը հավասար:

5. Ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողին կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվում մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև նրա 23 տարին լրանալը:

6. Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև մահացած ճանաչված անձի ընտանիքի վրա: Մահացած ճանաչված անձի ընտանիքի անդամներին կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակելիս այդ անձի մահվան օր է համարվում նրան մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռում սահմանված օրը:

7. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունքն ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար:

8. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է, եթե կերակրողը մահվան պահի դրությամբ ունեցել է սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող նվազագույն աշխատանքային ստաժը:

9. Ընդհանուր հիվանդության, մանկուց հիվանդության, բնական, տեխնածին և այլ աղետների հետևանքով հաշմանդամ ճանաչված անձի մահանալու դեպքում նրա ընտանիքի՝ կերակրողին կորցնելու կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներին կենսաթոշակ նշանակվում է, եթե կերակրողը մահվան պահի դրությամբ ունեցել է սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված անհրաժեշտ ստաժը:

Աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով մահացած անձի ընտանիքի՝ կերակրողին կորցնելու կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներին կենսաթոշակ է նշանակվում՝ անկախ մահացած անձի աշխատանքային ստաժի տևողությունից:

Հոդված 14. Մասնակի կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Մասնակի կենսաթոշակ նշանակվում է.

1) կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին և ունեն առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 տարին մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը ձեռք բերած մասնագիտական ստաժ է.

2) թատերական և թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին և ունեն առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 տարին մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը ձեռք բերած մասնագիտական ստաժ է,

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, ովքեր մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել են մասնակի կենսաթոշակ նշանակելու համար (մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը ունեցել են առնվազն 12 տարվա մասնագիտական ստաժ) և լրացել է նրանց՝ սույն հոդվածով սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:

2. Մասնակի կենսաթոշակի չափը հաշվարկելիս աշխատանքային ստաժում հաշվառվում է մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածը:

3. Մասնակի կենսաթոշակը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

4. Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հողված 15. Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի և կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է:

Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի և կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

Աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$Կ = \Sigma + (U \times U) \times Q$, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,

Ա-ն՝ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակցիցը:

2. Կենսաթոշակառուի անձնական գործակցիցը հաշվարկելիս հիմք է ընդունվում պահանջվող աշխատանքային ստաժը:

Մինչև 25 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար գործակցիցը սահմանվում է 0,04, իսկ 25 տարուց ավելի աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,02:

Կենսաթոշակառուի անձնական գործակցիցը հաշվարկվում է՝

ա) մինչև 25 տարվա (ներառյալ) ստաժի առկայության դեպքում՝ $Գ = 0.04 \times U$ բանաձևով,

բ) 25 տարուց ավելի աշխատանքային ստաժի դեպքում՝ $Գ = 1 + 0.02 \times (U - 25)$ բանաձևով:

3. 1971 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձանց տարիքային կենսաթոշակի չափը հաշվարկելիս աշխատանքային ստաժում հաշվառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված աշխատանքային և այլ գործունեության՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ընկած ժամանակահատվածները՝ բացի կենսաթոշակառուի անձնական գործակցիցը հաշվարկելիս:

4. Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելիս հիմնական կենսաթոշակի չափը հաշվարկվում է.

1) առաջին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 140 տոկոսի չափով.

2) երկրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսի չափով,

3) երրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 100 տոկոսի չափով:

5. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակը հիմնական կենսաթոշակի չափով նշանակվում է ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրին՝ ավելացնելով մահացած կերակրողի հաշվարկված կենսաթոշակի աշխատանքային մասը՝ հետևյալ չափերով.

1) մեկ խնամարկյալին՝ 50 տոկոսի չափով.

2) երկու խնամարկյալին՝ 90 տոկոսի չափով.

3) երեք խնամարկյալին՝ 120 տոկոսի չափով.

4) չորս և ավելի խնամարկյալին՝ 150 տոկոսի չափով:

Երկու ծնողին կորցրած յուրաքանչյուր երեխայի կենսաթոշակը նշանակվում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկի չափով՝ ավելացնելով յուրաքանչյուր ծնողի հաշվարկված կենսաթոշակի աշխատանքային մասը՝ սույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված չափերով:

Հողված 16. Հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը

1. Հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը չեն կարող պակաս լինել հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի՝ նախկինում սահմանված չափերից:

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հոդված 17. Զինվորական կենսաթոշակի իրավունքը

Զինվորական կենսաթոշակի իրավունք ունի.

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության (այսուհետ նաև՝ համապատասխան մարմին) համակարգի հրամանատարական (ենթասպայական, սպայական) և շարքային անձնակազմի ծառայողը.

2) վարժական հավաքների կանչված զինապարտը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցը.

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողը և հարկադիր կատարողը:

Հոդված 18. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն զինվորական ծառայողին (այսուհետ նաև՝ զինծառայող), ով՝

1) ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին ունի առնվազն 20 տարվա (օրացուցային) զինվորական ծառայության ստաժ.

2) տարիքի կամ առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու պահին օրենքով սահմանված՝ ծառայության սահմանային (առավելագույն) տարիքի է և ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 տարի 6 ամիսը (օրացուցային) զինվորական ծառայության ստաժն է:

2. Զինծառայողին կենսաթոշակ է նշանակվում ծառայությունից սահմանված կարգով ազատվելու դեպքում:

3. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Հոդված 19. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ կարգով.

ա) սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետում նշված զինծառայողին՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի ծառայած յուրաքանչյուր լրիվ տարվա համար երկարամյա ծառայության կենսաթոշակին ավելանում է ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 2 տոկոսը, իսկ մինչև զինվորական ծառայություն անցնելը աշխատած և զինվորական ծառայություն չհամարվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը.

բ) սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետում նշված զինծառայողին՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 65 տոկոսի չափով. 12 տարի 6 ամսից ավելի զինվորական ծառայության յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա համար երկարամյա ծառայության կենսաթոշակին ավելանում է ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի մեկ տոկոսը, սակայն 5 տոկոսից ոչ ավելի, 25 տարուց ավելի արտոնյալ հաշվարկով զինվորական ծառայության և այլ բնույթի գործունեության մեկ լրիվ տարվա համար՝ 2 տոկոսը, 25 տարուց ավելի

աշխատած և զինվորական ծառայություն չհամարվող մեկ լրիվ տարվա համար՝ մեկ տոկոսը:

2. Չինվորական կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի չափը:

3. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող և զինվորական ծառայությունը շարունակող զինծառայողի ամսական դրամական բավարարմանը տրվում են հավելումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

Հոդված 20. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկատոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված այն զինծառայողին, ով հաշմանդամ է ճանաչվել զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սակայն ծառայության ժամանակ ծագած հիվանդության հետևանքով, այդ ժամկետից ուշ, սակայն ծառայության ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով:

2. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է անկախ զինվորական ծառայության տևողությունից:

3. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 21. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) առաջին խմբի հաշմանդամի համար՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 150 տոկոսից ոչ պակաս:

2) երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 60 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 110 տոկոսից ոչ պակաս:

3) երրորդ խմբի հաշմանդամի համար՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 40 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակից ոչ պակաս:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը կազմում է սույն հոդվածով սահմանված՝ կենսաթոշակի նվազագույն չափի կրկնապատիկը:

Հոդված 22. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ նշանակելը

1. Չոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում սույն օրենքի 13-րդ հոդվածով:

2. Չինծառայողի ընտանիքի անդամներին կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում՝ անկախ զինծառայողի զոհվելու (մահանալու) պատճառից և անցած ժամանակաշրջանից:

3. Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև.

1) զինվորական ծառայությունից սահմանված կարգով ազատված և, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողի ընտանիքի անդամների վրա, ում մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ ծագած հիվանդությունը:

2) զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամների վրա:

4. Չոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեն՝ անկախ գոհված (մահացած) զինծառայողի ծառայության տևողությունից:

5. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում նաև զինվորական ծառայությունից սահմանված կարգով ազատված և կենսաթոշակի իրավունք ձեռք բերած, սակայն կենսաթոշակ նշանակելու համար չդիմած և ծառայությունից սահմանված կարգով ազատվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մահացած նախկին զինծառայողի ընտանիքի անդամներին:

6. Ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անդամին, ով ունի կամ ձեռք է բերում նաև աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակի իրավունք, նշանակվում է աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակ և այդ կենսաթոշակին, զինվորական կենսաթոշակի փոխարեն, տրվում է հավելում՝ սույն օրենքի 23-րդ հոդվածով և 25-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի և հավելման չափով:

Կենսաթոշակին հավելում տալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 23. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) ծնողին կորցրած յուրաքանչյուր երեխայի համար՝ մահացած կերակրողի դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 40 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակից ոչ պակաս:

2) ծնողներին կորցրած յուրաքանչյուր երեխայի համար՝ կերակրողի դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 60 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 150 տոկոսից ոչ պակաս:

3) ընտանիքի՝ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր այլ անդամի համար՝ կերակրողի դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 30 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակից ոչ պակաս:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի ընտանիքի անդամների կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը կազմում է սույն հոդվածով սահմանված՝ կենսաթոշակի նվազագույն չափի կրկնապատիկը:

Հոդված 24. Ամսական դրամական բավարարումը որոշելու կարգը

1. Չինծառայողին սույն օրենքով կենսաթոշակ նշանակելիս կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք են ընդունվում նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարումը և սննդի փոխհատուցման գումարը:

2. Դրամական բավարարման մեջ մտնող վճարումների տեսակների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 25. Չինծառայողի կենսաթոշակին տրվող հավելումները և դրանց չափերը

1. Չինծառայողի կենսաթոշակին տրվում են հավելումներ՝

1) պատերազմի, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողի կենսաթոշակին՝ սույն օրենքի 21-րդ հոդվածով հաշվարկված հաշմանդամության կենսաթոշակի նվազագույն չափով՝ ըստ հաշմանդամության խմբի:

2) Հայրենական մեծ պատերազմի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ այլ պետություններում մարտական գործողությունների մասնակցի կենսաթոշակին՝ օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով.

3) իր խնամքի տակ սույն օրենքի 13 հոդվածի «ա», «բ» և «գ» կետերով սահմանված, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով խնամարկյալներ ունեցող կենսաթոշակառուի կենսաթոշակին՝ յուրաքանչյուր խնամարկյալի համար՝ հիմնական կենսաթոշակի 20 տոկոսի չափով.

4) 1-ին խմբի հաշմանդամի կենսաթոշակին՝ հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով, իսկ 2-րդ խմբի հաշմանդամի կենսաթոշակին, ինչպես նաև 70 և բարձր տարիքի կենսաթոշակառուի կենսաթոշակին՝ հիմնական կենսաթոշակի 30 տոկոսի չափով.

5) Հայաստանի ազգային հերոսի, ԽՍՀՄ հերոսի, 1-ին և 2-րդ աստիճանի Մարտական խաչ, ինչպես նաև Փառքի երեք աստիճանների շքանշանակրի կենսաթոշակին՝ հիմնական կենսաթոշակի չափով.

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ հաշմանդամ դարձած շարքային զինծառայողների համար՝ սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի 80 տոկոսի չափով.

7) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ գոհված (մահացած) շարքային զինծառայողի ընտանիքի համար՝ սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի 80 տոկոսի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասով սահմանված հավելումները կարող են հաշվարկվել միաժամանակ՝ բացառությամբ 1-ին և 2-րդ կետերով նախատեսվածների, բայց ընդհանուր գումարով՝ հիմնական կենսաթոշակի վեցապատիկից ոչ ավելի:

3. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված հավելումները չեն տրվում այն դեպքում, երբ կենսաթոշակառուն աշխատում է, ինչպես նաև այն դեպքում, երբ նրա խնամքի տակ գտնվող խնամարկյալները կենսաթոշակ են ստանում:

ԳԼՈՒԽ 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հոդված 26. Ծերության սոցիալական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Ծերության սոցիալական կենսաթոշակ նշանակվում է 65 տարին լրացած և աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող անձին:

2. Ծերության կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ նշանակելու համար կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ:

3. Ծերության սոցիալական կենսաթոշակը նշանակվում է Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 27. Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող հաշմանդամին, ինչպես նաև «հաշմանդամ երեխա» ճանաչված անձին նշանակվում է հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ:

2. Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակը սահմանվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար, սակայն Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենալու ժամանակահատվածից ոչ ավելի:

Հոդված 28. Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Սույն օրենքի 13-րդ հոդվածում սահմանված՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող անձին նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ:

2. Սույն հոդվածով կենսաթոշակ նշանակվում է նաև առանց ծնողական խնամքի մնացած այն երեխային, ում ծնողներն անհայտ են:

3. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունքն ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար, սակայն Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենալու ժամանակահատվածից ոչ ավելի:

Հոդված 29. Սոցիալական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Ծերության սոցիալական կենսաթոշակը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի 100 տոկոսի չափով:

2. Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակը հաշվարկվում է՝

1) առաջին խմբի հաշմանդամի և «հաշմանդամ երեխա» ճանաչված անձի համար՝ ծերության սոցիալական կենսաթոշակի 140 տոկոսի չափով.

2) երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ ծերության սոցիալական կենսաթոշակի 120 տոկոսի չափով,

3) երրորդ խմբի հաշմանդամի համար՝ ծերության սոցիալական կենսաթոշակի 100 տոկոսի չափով:

3. Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է ծերության սոցիալական կենսաթոշակի չափով:

Երկու ծնողին կորցրած յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի չափը հաշվարկվում է ծերության սոցիալական կենսաթոշակի հնգապատիկի չափով:

ԳԼՈՒԽ 5 . ՍՏԱԺՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԸ ԵՎ ՍՏԱԺԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 30. Աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները

1. Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են.

1) Հայաստանի Հանրապետությունում գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու) և քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու ժամանակահատվածը, ինչպես նաև ԽՍՀՄ տարածքում օրենսդրությամբ չարգելված աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածը,

2) անհատ ձեռնարկատեր հանդիսանալու, նոտարի պաշտոնավարման, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածները,

3) սույն օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի «ա» և «բ» կետերով սահմանված զինվորական ծառայության ժամանակահատվածը (բացառությամբ ուսումնական հաստատությունում ուսման ժամանակահատվածի),

4) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող՝ հաշմանդամ ճանաչված անձի հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածը՝ մինչև նրա տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

2. Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև՝

1) գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածը.

2) ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի.

3) ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի.

4) սպայական կազմի, ենթասպայական կազմի և շարքային կազմի պայմանագրային զինծառայող ամուսնու հետ համատեղ ապրած ժամանակահատվածն այն վայրերում, որտեղ բացակայել է հարմար աշխատանքի անցնելու հնարավորությունը՝ հինգ տարուց ոչ ավելի.

5) օտարերկրյա պետությունում գործող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմին դիվանագիտական ծառայության մեկնած ամուսնու հետ համատեղ ապրած ժամանակահատվածը՝ հինգ տարուց ոչ ավելի,

6) ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի,

7) բռնադատված կամ քրեական հետապնդման ենթարկված և հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացված անձի՝ կալանքի տակ գտնվելու, ազատագրված և վայրերում և աքսորավայրերում պատիժ կրելու ժամանակահատվածները՝ եռակի չափով՝ սկսած 14 տարեկանից,

8) սույն օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամանակահատվածները՝ եռակի չափով:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու), անհատ ձեռնարկատեր հանդիսանալու, նոտարի պաշտոնավարման, արտոնագրային վճար վճարելու, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսանալու ժամանակահատվածները հաշվառվում են ապահովագրական ստաժում, եթե.

1) անձը ենթակա է եղել պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության և ստացել է աշխատավարձ,

2) անձը ենթակա է եղել պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության և վճարել է պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, իսկ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ (այսուհետ՝ սոցիալական վճար):

4. Աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Պատերազմների, ռազմական գործողությունների, տարերային աղետների, վթարների, արհավիրքների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքով աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է աշխատանքային ստաժ սահմանող հանձնաժողովներ, որոնց կազմի մեջ մտնում են գործադիր իշխանությունների, գործատուների, արհմիությունների կամ աշխատողների լիազորած այլ ներկայացուցիչներ:

Հոդված 31. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանց հաշվարկման առանձնահատկությունները

1. Քաղաքացիական ավիացիայի թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական, թռիչքային անձնակազմի անդամների աշխատանքային ստաժում հաշվարկվում են՝

1) միսցային օդանավերով կատարած յուրաքանչյուր 20 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ստաժ.

2) ռեակտիվ օդանավերով, ուղղաթիռներով, հատուկ կիրառման ավիացիայում (սանիտարական թռիչքներ, ավիաքիմիական աշխատանքներ, ավիալուսանկարահանում, պարեկություն, մթնոլորտի զոնդում և այլ տեսակի աշխատանքներ), այլ պետությունների

օդանավերին ուղեկցող խմբերի թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական, թռիչքային անձնակազմի անդամների պաշտոններում աշխատելու, ինչպես նաև ավիացիայի թռիչքային անձնակազմի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորելու ժամանակ կատարած յուրաքանչյուր 12 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ստաժ:

3) վթարային-փրկարարական (որոնող-փրկարարական) ստորաբաժանումներում օդանավերի թռչող անձնակազմի մեկ տարվա աշխատանքը՝ որպես մեկուկես տարվա ստաժ:

4) ԴՕՍԱԱՖ-ի ուսումնական և սպորտային ավիացիայի կազմակերպությունների թռչող անձնակազմի պաշտոններում կատարած մեկ տարվա ծառայությունը՝ որպես մեկուկես տարվա ստաժ, եթե կատարվել է ուսումնաթռիչքային պատրաստման պլանը, երկու տարվա ստաժ՝ եթե կատարվել են թռիչքային բարդ կամ բարձրակարգ հնարքներ:

5) պարաշյուտիստների և փրկարարների մեկ տարվա ծառայությունը՝ որպես մեկուկես տարվա ստաժ, եթե կատարվել է մխոցային օդանավերից, ուղղաթիռներից, դիրիժաբլներից և անրոտատներից թռչելու, տասը մետրից ոչ պակաս բարձրության վրա կախման ռեժիմում գտնվող ուղղաթիռներից հատուկ իջեցնող հարմարանքներով վայրէջքի տարեկան նորման, երկու տարվա ստաժ, եթե կատարվել է ռեակտիվ ինքնաթիռներից և ուղղաթիռներից թռչելու տարեկան նորման:

2. Բորտօպերատորների և բորտուղեկցորդների աշխատանքային ստաժը հաշվարկվում է փաստացի թռիչքային ժամերը սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված թռիչքի ժամերի (համապատասխանաբար՝ 20-ի և 12-ի) վրա բաժանելու միջոցով:

3. Սույն հոդվածի առաջին մասի 4-5-րդ կետերով սահմանված ծառայության ժամկետների արտոնյալ հաշվարկման իրավունք տվող պայմանները չկատարելու դեպքում մեկ տարվա ծառայությունը հաշվարկվում է որպես մեկ տարվա ստաժ:

Հոդված 32. Չինվորական ծառայության ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանց հաշվարկման առանձնահատկությունները

1. Չինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են՝

ա) համապատասխան մարմինների համակարգերի շարքային և հրամանատարական անձնակազմերում զբաղեցրած պաշտոններով ծառայությունը, քրեակատարողական ծառայողի և հարկադիր կատարողի ծառայությունը, ինչպես նաև դրանց ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից,

բ) զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերում, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի և ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության համակարգերում, ինչպես նաև դրանց ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից,

գ) դատապարտված կամ քրեական հետապնդման ենթարկված այն զինծառայողներին՝ կալանքի տակ, ազատազրկման վայրում և աքսորում գտնվելու ժամանակաշրջանը, ում նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ կամ ընդունվել քրեական գործը կարճելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի, հանցակազմի բացակայության կամ հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով:

2. Չինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում զինվորական ծառայության ստաժում հաշվառվում են.

1) եռակի չափով՝

ա) զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածները,

բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը կամ Հայաստանի

Հանրապետության տարածքից դուրս զինվորական ծառայությունը՝ հատուկ մարտական առաջադրանք կատարելու դեպքում,

զ) 1986 թվականի ապրիլից մինչև 1987 թվականի դեկտեմբերի 31-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակաշրջանը,

դ) անօրինական դատապարտված կամ անօրինական քրեական հետապնդման ենթարկված այն զինծառայողների՝ կալանքի տակ, ազատագրվման վայրում և աքտորում գտնվելու ժամանակաշրջանը, որոնց նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ կամ ընդունվել քրեական գործը կարճելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի, հանցակազմի բացակայության կամ հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով.

ե) մարտական գործողություններ կամ հատուկ առաջադրանք կատարելիս վիրավորված, կոնտուզիա, հաշմանդամություն կամ հիվանդություն ստացած զինծառայողների անընդհատ բուժման ժամանակաշրջանը,

զ) զինծառայությունն այլ երկրների տարածքներում, որտեղ տեղի են ունեցել մարտական գործողություններ (բացի այն զինծառայողներից, որոնք արձակվել են զինծառայությունից կամ այդ պետություններից ետ են կանչվել զինծառայողի կոչումը վարկաբեկող արարքների կապակցությամբ), ինչպես նաև այդ երկրներում վիրավորվելու, կոնտուզիա, հաշմանդամություն կամ հիվանդություն ստանալու կապակցությամբ բուժիմանարկներում անընդհանուր բուժման ժամանակաշրջանը,

է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

2) կրկնակի չափով՝

ա) զինված ուժերի ավիացիոն ստորաբաժանումների օդաչուների ծառայությունը՝ թռիչքների տարեկան նորմերը կատարելու դեպքում,

բ) գերության ժամանակահատվածը, եթե զինծառայողը կամավոր չի գերվել և գերության ընթացքում Հայաստանի Հանրապետության նկատմամբ հանցագործություն չի կատարել,

զ) 1961 թվականի հունվարի 1-ից մինչև 1982 թվականի դեկտեմբերի 31-ը զինվորական մասնագետների (բացի օդաչուներից)՝ այն երկրներ գործուղման ժամանակահատվածը, որոնց բանակները մարտական գործողություններ են կատարել կամ ռազմական օգնություն են ցույց տվել այլ երկրների (անկախ այդ մարտական գործողություններին նշված զինծառայողների մասնակցությունից),

դ) բարձր լեռնային վայրերում՝ 1976 թվականի հունվարի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 2500 մետր և ավելի, իսկ 1997 թվականի օգոստոսի 11-ից՝ 2000 մետր և ավելի բարձրության, զինծառայությունը,

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

3) մեկուկեսի չափով՝

ա) պարաշյուտիստների ծառայությունը՝ համապատասխան մարմինների սահմանած թռիչքների տարեկան նորմերը կատարելու դեպքում, և սակրավորների ծառայությունը,

բ) հատուկ ստորաբաժանումներում զինծառայող կանանց ծառայությունը՝ ըստ համապատասխան մարմինների սահմանած պաշտոնների ցանկի,

զ) զինծառայությունն այն տարածքներում, որտեղ արտակարգ դրություն է հայտարարվել,

դ) զինծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում՝ 1992 թվականի փետրվարի 1-ից մինչև 1994 թվականի մայիսի 1-ը,

ե) լեռնային վայրերում՝ 1973 թվականի ապրիլի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 1500 մետր և ավելի, իսկ 1998 թվականի նոյեմբերի 30-ից՝ 1700-2000 մետր բարձրության, զինծառայությունը,

զ) 1988 թվականի հունվարի 1-ից մինչև 1990 թվականի դեկտեմբերի 1-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակահատվածը,

է) զինժառայությունն ազգային անվտանգության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի «Ա» ստորաբաժանումում,

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

4) մեկ ամսվա այլ բնույթի գործունեությունը՝ մեկ ամիս զինվորական ծառայություն հաշվելու պայմանով՝

ա) մինչև զինվորական ծառայության անցնելը նախկին ԽՍՀՄ ԴՕՍԱԱՖ-ի և քաղաքացիական ավիացիայի համակարգերում օդաչուական և ինժեներատեխնիկական անձնակազմի աշխատանքային ստաժը,

բ) Հայաստանի Հանրապետության զինված ուժեր գորակոչված, սպայական կոչում ստացած և սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայություն անցած սպաների՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորելու ժամանակահատվածը.

5) մեկ տարվա այլ բնույթի գործունեությունը՝ 6 ամիս զինվորական ծառայություն հաշվելու պայմանով՝

ա) մինչև զինվորական ծառայության անցնելը պահեստից գորակոչված սպայական անձնակազմի՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում մինչև 5 տարի առկա ուսման ժամանակահատվածը,

բ) Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորած, Հայաստանի Հանրապետության զինված ուժեր գորակոչված, սպայական կոչում ստացած ու սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայություն անցած զինժառայողների ուսման ժամանակահատվածը:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Զինժառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի հաշվարկման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 33. Աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերը և ստաժը հաշվառելու կարգը

1. Մինչև 2011 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը աշխատանքային գրքույկն է և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթը, 1992 թվականի հունվարից մինչև 2011 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը:

Սոցիալական վճարներ կատարելը հաստատող փաստաթղթին և աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթին ներկայացվող պահանջները (վավերապայմանները) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. 2011 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատվում է՝ հիմք ընդունելով սույն օրենքի 7-րդ գլխով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալները:

3. Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

4. Աշխատանքային ստաժը հաշվառվում է տարիներով և հաշվարկվում է օրենքով սահմանված ժամանակահատվածների հանրագումարի ամիսների թիվը 12-ի բաժանելով:

5. Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

6. Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու, անհատ ձեռնարկատեր հանդիսանալու, նոտարի պաշտոնավարման ժամանակահատվածները, սկսած 2011 թվականի հունվարի 1-ից, աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձ ստացող վարձու աշխատողի կողմից կատարվող տարեկան նվազագույն եկամտային հարկի չափով վճարումներ կատարած լինելու դեպքում, որը հիմք է նշված անձանց կենսաթոշակ նշանակելիս մեկ տարվա աշխատանքային ստաժ հաշվարկելու համար: Տվյալ տարվա ընթացքում սահմանված չափից պակաս եկամտային հարկ վճարած լինելու դեպքում աշխատանքային ստաժը համամասնորեն պակասեցվում է:

ՎԼՈՒԽ 6. ԿԵՆՍԱԹՈՐԱԿ ԵՎ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԵՎ ՎՃԱՐԵԼԸ

Հոդված 34. Կենսաթոշակ նշանակելը

1. Կենսաթոշակը քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում նրա հաշվառման վայրի, իսկ հաշվառման վայր չունեցող անձին կենսաթոշակ է նշանակվում ըստ նրա փաստացի բնակության վայրի:

Զինվորական կենսաթոշակ նշանակում է համապատասխան մարմնի՝ սոցիալական ապահովություն իրականացնող ստորաբաժանումը:

2. Կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմում ներկայացնելու օրը: Դիմումին կցվում են օրենսդրությամբ սահմանված՝ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Եթե դիմումի հետ ներկայացվում են անհրաժեշտ ոչ բոլոր փաստաթղթերը, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն ընդունում է դիմումը և դիմողին գրավոր տեղեկացնում, թե ինչ փաստաթղթեր պետք է լրացուցիչ ներկայացվեն:

Եթե քաղաքացին դիմումին չի կցում սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, ապա սոցիալական վճար կատարած լինելու մասին տեղեկանքը ձեռք է բերում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Եթե դիմումն առաքվում է փոստով, և դրան կցվում են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, ապա կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում այդ դիմումն ուղարկող փոստային բաժանմունքի դրոշմակնիքի վրա նշված օրը: Եթե դիմումին կցվել են անհրաժեշտ ոչ բոլոր փաստաթղթերը, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն ընդունում է դիմումը և երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմողին գրավոր տեղեկացնում է, թե ինչ փաստաթղթեր պետք է լրացուցիչ ներկայացվեն:

4. Տեղեկացվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու դեպքում դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակելու դիմումն ընդունելու կամ փոստային բաժանմունքի դրոշմակնիքի վրա նշված օրը:

5. Կենսաթոշակ նշանակելու դիմումն անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով ընդունելուց կամ երեք ամսվա ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դրանք քննարկում է և կայացնում կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշում:

Կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելու դեպքում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, կազմում է կենսաթոշակի էլեկտրոնային գործ:

Կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշում կայացնելու դեպքում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է դիմողին՝ նշելով մերժելու պատճառը և բողոքարկելու կարգը:

6. Կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակ փոխելու, կենսաթոշակ վճարելու և

կենսաթոշակի գործը (փաստաթղթեր) վարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 35. Կենսաթոշակ նշանակելու ժամկետները

1. Կենսաթոշակ նշանակվում է՝

1) դիմելու օրվանից.

2) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում.

3) կերակրողի մահվան օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում.

4) զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Հոդված 36. Կենսաթոշակ վճարելը

1. Յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է մինչև տվյալ ամսվա 20-ը՝ լրիվ չափով: Վճարման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցներից:

Սույն օրենքով նշանակված կենսաթոշակները վճարում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը կամ կենսաթոշակառուի ընտրությամբ՝ վճարման ծառայություն մատուցող այլ կազմակերպություն:

2. 2011 թվականի հունվարի 1-ից կենսաթոշակի անցած կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է անկանխիկ՝ կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Կենսաթոշակը բանկային հաշվին փոխանցելու միջոցով ստացող կենսաթոշակառուն տարեկան մեկ անգամ կենսաթոշակի անկանխիկ վճարում իրականացնող կազմակերպության հետ կնքում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի պայմանագիր:

3. Հաշմանդամության խումբը փոխվելու, ինչպես նաև «հաշմանդամ երեխա» կարգավիճակը փոխվելու և հաշմանդամության խումբ ձեռք բերելու դեպքում կենսաթոշակը նոր չափով վճարվում է այդ հանգամանքն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության ներկայանալու և վերափորձաքննությամբ հաշմանդամ ճանաչվելու դեպքում կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրվանից: Վերափորձաքննությամբ վերստին հաշմանդամ ճանաչվելու դեպքում կենսաթոշակն այդ ժամանակահատվածի համար վճարվում է նախկին հաշմանդամության խմբով հաշվարկված չափով:

4. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը վճարվում է ընտանիքի գործունակ չափահաս կամ օրենքով իրենց եկամուտը տնօրինելու իրավունք ունեցող անչափահաս անդամներից որևէ մեկին, կամ խնամակալին:

Ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր անդամներին վճարվում է մեկ ընդհանուր կենսաթոշակ: Ընտանիքի անդամի պահանջով նրա կենսաթոշակն առանձնացվում և վճարվում է առանձին՝ առանձնացնելու մասին դիմում տալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անդամների թիվը փոխվելիս կենսաթոշակի չափը փոխվում է այդ թվին համապատասխան:

5. Կենսաթոշակը կարող է վճարվել լիազորագրով: Մեկ լիազորագրով կարող է վճարվել մինչև լիազորագիրը տալու ամսին ընկած ժամանակահատվածի չստացված կենսաթոշակի գումարները, ինչպես նաև՝ ոչ ավել, քան 12 ամսվա կենսաթոշակ՝ սկսած լիազորագիրը տալու ամսվանից:

Հոդված 37. Չստացված կենսաթոշակը վճարելը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակահատվածի համար չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար:

2. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար:

3. Կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարը վճարվում է մահացածի ընտանիքի անդամին՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: Սահմանված ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում՝ չստացված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման: Ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Չստացված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

Հոդված 38. Կենսաթոշակի տեսակը փոխելը

1. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, մինչև կենսաթոշակառուի տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը, նրա ցանկությամբ փոխում է կենսաթոշակի տեսակը:

2. Սույն օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, մասնակի, քաղաքացիական ավիացիայի աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակների փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմելուց, նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա:

3. Կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակի տեսակ փոխելու հանգամանքներ առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում կենսաթոշակի տեսակը փոխելիս կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժը հաշվառվում է նույնությամբ:

Հոդված 39. Կենսաթոշակը վերահաշվարկելը

1. Աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և (կամ) կենսաթոշակառուի անձնական գործակիցը փոխվելու դեպքում:

2. Սոցիալական կենսաթոշակը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը փոխվելու դեպքում:

3. Ջինվորական կենսաթոշակը վերահաշվարկվում է զինծառայողների դրամական բավարարման և (կամ) հիմնական կենսաթոշակի չափը փոխվելու դեպքում:

4. Կենսաթոշակը տարին մեկ անգամ վերահաշվարկելու իրավունք ունի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամության կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուն՝ առնվազն վեց ամիս աշխատած լինելու դեպքում:

Կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակը վերահաշվարկելու հանգամանքներ առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Հոդված 40. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակ վճարելը

1. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում (մանկատանը) ապրող երեխային վճարվում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի 50 տոկոսը:

Այդ գումարները, մինչև երեխայի 18 տարեկան դառնալը կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալը, կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով կուտակվում են երեխայի անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշվում և երեխայի 18 տարին լրանալու կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում վճարվում միանվագ կարգով:

2. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում (ծերանոցում) ապրող կենսաթոշակառուին վճարվում է նշանակված կենսաթոշակի աշխատանքային մասը, իսկ այդ կազմակերպությունում ապրող՝ զինվորական կենսաթոշակ ստացողներին՝ կենսաթոշակի 50 տոկոսը:

3. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

Հոդված 41. Ազատագրված վայրում գտնվող ազատագրվածին կենսաթոշակ նշանակելը և վճարելը

Ազատագրված վայրում գտնվող ազատագրվածը կենսաթոշակ նշանակելու, վճարելու, բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվելու համար գրավոր դիմում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարին:

Քրեակատարողական հիմնարկի ղեկավարը ազատագրվածի գրավոր դիմումի հիման վրա նախապատրաստում է ազատագրվածին օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակ նշանակելու և վճարելու կամ նրան բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Ազատագրված վայրում գտնվող ազատագրվածին կենսաթոշակ նշանակելու, վճարելու կամ նրան բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու կարգը սահմանում Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 42. Կենսաթոշակ վճարելը դադարեցնելը և վերսկսելը

1. Կենսաթոշակ վճարելը դադարեցվում է՝

1) կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև մահացած կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

2) հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում.

3) կենսաթոշակառուի կողմից տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չստանալու դեպքում.

4) կերակրողին կորցնելու դեպքում նշանակված կենսաթոշակի սահմանված ժամկետը լրանալու կամ այդ կենսաթոշակի իրավունքը կորցնելու դեպքում.

5) սույն օրենքի 9-րդ հոդվածի չորրորդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի «գ», «դ», «ե», «զ» կետերով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի աշխատելու դեպքում.

6) սույն օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի՝ համապատասխան մարմիններում, քրեակատարողական, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում կամ դատախազությունում ծառայության անցնելու դեպքում.

7) կենսաթոշակի իրավունքը կորցնելու կամ կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում:

Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունքը դադարելու դեպքում սոցիալական կենսաթոշակ վճարելը դադարեցվում է այդ հանգամանքն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Սույն հոդվածի առաջին մասի 1-6-րդ կետերում նշված դեպքերում կենսաթոշակ վճարելը դադարեցվում է այդ հանգամանքներն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից, իսկ 7-րդ կետում նշված դեպքում՝ հայտնաբերելու օրվանից:

2. Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է՝

1) կենսաթոշակառուին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին որոշումը չեղյալ համարելու վերաբերյալ դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո՝ կենսաթոշակառուի գրավոր դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

2) 18 տարին լրացած անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից, եթե ուսման մասին ուսումնական հաստատությունից տեղեկանք է ներկայացվում այդ օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո տեղեկանք ներկայացնելու դեպքում՝ անձի գրավոր դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

3) սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակված լինելու դեպքում՝ անձի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

4) հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ դադարեցման օրվանից, բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից ստացված՝ անձի հաշմանդամությունը հաստատող տեղեկանքի հիման վրա:

Հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում, հաշմանդամ ճանաչվելու օրվանից՝ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից ստացված՝ անձի հաշմանդամությունը հաստատող տեղեկանքի հիման վրա, իսկ այդ ժամկետից հետո հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ անձի գրավոր դիմումի հիման վրա:

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի գրավոր դիմելու և անհրաժեշտ այլ փաստաթղթեր ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից: Կենսաթոշակ վճարելը վերսկսելու դեպքում տվյալ կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում: Այս դեպքում կենսաթոշակի չափը հաշվարկվում է հաշվի առնելով սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Հոդված 43. Բնակության վայրը փոխելու դեպքում կենսաթոշակ վճարելը

1. Բնակության վայրը փոխելու դեպքում կենսաթոշակառուի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակը վճարում է նախկին բնակության վայրից նրա կենսաթոշակի գործն ստանալուց հետո: Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրվանից:

2. Կենսաթոշակի գործը տեղափոխվում է բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման պահանջագրով, կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ մեկամսյա ժամկետում:

3. Կենսաթոշակի գործն ուղարկող կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը գործի հետ ուղարկում է նաև կենսաթոշակի վերջին վճարման մասին տեղեկանք:

Հոդված 44. Կենսաթոշակից պահումներ կատարելը

1. Կենսաթոշակից պահումներ կարող են կատարվել՝

1) օրինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների հիման վրա.

2) սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, ընտանիքի անդամների թվի փոփոխությունների մասին տեղեկություններ չներկայացնելու հետևանքով կենսաթոշակառուներին ավելի վճարված գումարները հետ գանձելու մասին

փաստացի բնակության վայրի՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշման հիման վրա, սակայն նշանակված կենսաթոշակի 15 տոկոսից ոչ ավելի:

2. Կենսաթոշակից կատարվող պահումների չափը հաշվարկվում է կենսաթոշակառուին վճարվելիք ամսական գումարից:

3. Կենսաթոշակից կատարվող պահումների ընդհանուր գումարը պետք է չգերազանցի կենսաթոշակի 30 տոկոսը:

Հոդված 45. Կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ վճարելը

1. Կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև հաշմանդամ ճանաչված անձի՝ հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության չներկայանալու և մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ:

2. Բժշկատոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված, բայց կենսաթոշակ նշանակելու համար չդիմած անձի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ, եթե հաշմանդամը մահացել է հաշմանդամ ճանաչվելու օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում:

3. Ծառայությունից սահմանված կարգով ազատված, ինչպես նաև բժշկատոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված և կենսաթոշակի իրավունք ձեռք բերած, սակայն կենսաթոշակ նշանակելու համար չդիմած և ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց կամ հաշմանդամությունը հաստատվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մահացած նախկին զինծառայողի հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ:

4. Թաղման նպաստը վճարվում է դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում՝ դրանք ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

5. Թաղման նպաստ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և թաղման նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Թաղման նպաստի սահմանվող չափը չի կարող պակաս լինել նախկին չափից:

Գ Լ ՈՒ Ն 7.

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդված 46. Պետական կենսաթոշակային ապահովության համակարգում տվյալների շտեմարան ստեղծելու նպատակը

Պետական կենսաթոշակային ապահովության համակարգում տվյալների շտեմարան (այսուհետ՝ շտեմարան) ստեղծելու նպատակն է՝ ապահովել անձի կենսաթոշակային ապահովության իրավունքի իրացումը:

Հոդված 47. Շտեմարան ներառվող տվյալները

1. Շտեմարանը ներառում է.

1) ֆիզիկական անձանց, ինչպես նաև կենսաթոշակառուներին վերաբերող հետևյալ տվյալները,

ա) սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում),

բ) ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը և տարին, անձի մահվան դեպքում՝ մահվան օրը, ամիսը և տարին,

գ) սեռը,

դ) հաշվառման և փաստացի բնակության վայրը.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի (մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայականի) սերիան ու համարը, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ փախստականի վկայականի սերիան ու համարը,

զ) քաղաքացիությունը.

է) աշխատանքային ստաժում հաշվառվող՝ օրենքով սահմանված այլ գործունեության ժամանակահատվածներին վերաբերող տվյալները,

ը) վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի, թաղման նպաստի գումարները, վճարելու օրը, ամիսը և տարին.

2) վարձու աշխատողի դեպքում՝ նաև.

ա) աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու օրը, ամիսը, տարին,

բ) աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող փաստաթղթերի (պայմանագիր, հրաման և այլն) տվյալները, մասնագիտությունը (պաշտոնը), արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային գործունեության ժամանակահատվածներին վերաբերող տվյալները,

գ) գործատուի (գործատուների) հարկ վճարողի հաշվառման համարը, լրիվ անվանումը, գտնվելու վայրը կամ պետական գրանցման վայրի հասցեն, պետական ռեգիստրում գրանցվելու օրը, ամիսը, տարին և գրանցման համարը,

դ) եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ հանդիսացող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը՝ ըստ գործատուների և ամիսների.

3) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ նաև.

ա) պետական գրանցման օրը, ամիսը և տարին, պետական ռեգիստրում գրանցվելու համարը, ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու օրը, ամիսը և տարին,

բ) ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու) և ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնից ստանալու) օրը, ամիսը և տարին,

գ) եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ հանդիսացող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

4) նոտարի դեպքում՝ նաև.

ա) պաշտոնում նշանակվելու և պաշտոնից ազատվելու օրը, ամիսը և տարին,

բ) եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ հանդիսացող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

5) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստացողների դեպքում՝ նաև եկամուտ ստանալու ժամանակահատվածը, եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ հանդիսացող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

6) արտոնագրային վճար վճարողների դեպքում՝ նաև հարկային մարմնում գրանցվելու օրը, ամիսը և տարին, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածը:

2. Շտեմարանը ներառում է նաև կենսաթոշակ նշանակելու օրը, ամիսը, տարին, կենսաթոշակի չափը, ինչպես նաև կենսաթոշակառուներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած տվյալները:

Հոդված 48. Շտեմարանը ձևավորելը և վարելը

1. Շտեմարանը ձևավորվում է հարկային մարմնից ստացված և քաղաքացիների՝ կենսաթոշակ նշանակելու համար լիազոր մարմնի ստորաբաժանում (այսուհետ՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում) ներկայացրած տվյալներից:

2. Շտեմարանը վարում է լիազոր մարմինը:
3. Շտեմարանը ձևավորելու և վարելու, հարկային մարմնից սույն օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասով սահմանված տվյալներն ստանալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Շտեմարան ներառված տվյալները պաշտպանվում են օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 8.

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԱՂԱԶԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՃԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 49. Լիազոր մարմնի լիազորությունները

1. Լիազոր մարմինը՝
 - 1) մշակում և վարում է պետական կենսաթոշակային ապահովության միասնական քաղաքականությունը.
 - 2) վերահսկում է պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրառման օրինականությունը.
 - 3) իրականացնում է կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու) և վճարելու մեթոդական ղեկավարումը.
 - 4) կազմում է համակարգի զարգացման պետական համապատասխան ծրագրեր և ապահովում դրանց կատարումը.
 - 5) կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության կենսաթոշակային ապահովության մասին պետական ամենամյա զեկույց և յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից հետո՝ երկու ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո հրապարակում.
 - 6) գործատուներից, պետական այլ մարմիններից ու կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից պահանջում է կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված դեպքում՝ ստուգում դրանց հավաստիությունը.
 - 7) հարկային մարմնից, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ստանում է շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալներ, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով ստուգում դրանց հավաստիությունը.
 - 8) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով առաջարկություններ է ներկայացնում հարկային մարմին՝ շտեմարան ներառվող տվյալների հավաստիությունը ճշտելու և դրանք փոփոխելու համար.
 - 9) իր լիազորությունների շրջանակում քննարկում է կենսաթոշակային օրենսդրության խախտումները.
 - 10) օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում, վերահաշվարկում է կենսաթոշակները, ապահովում կենսաթոշակների վճարումը կամ մերժում կենսաթոշակ նշանակելու, նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումները.
 - 11) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է շտեմարանը, շտեմարանից տվյալներ տրամադրում գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին.
 - 12) օրենքով սահմանված կարգով քննարկում է կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու, վճարելու մասին դիմումները.
 - 13) կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կենսաթոշակառուին անվճար տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի կենսաթոշակի վկայական.
 - 14) կենսաթոշակային ապահովությանն առնչվող հարցերով իրենց դիմած քաղաքացիներին ապահովում է խորհրդատվությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ աջակցում նրանց պահանջվող փաստաթղթեր ստանալու գործում.

15) համագործակցում է համապատասխան հասարակական ու միջազգային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ.

16) կատարում է սույն օրենքի դրույթներից և իրավական այլ ակտերից բխող այլ գործառնություններ:

Հոդված 50. Ֆիզիկական ու իրավաբանական անձանց և կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները

1. Ֆիզիկական ու իրավաբանական անձինք և կազմակերպություններն իրավունք ունեն՝

1) լիազոր մարմնից խորհրդատվություն և մեթոդական պարզաբանումներ ստանալ կենսաթոշակային համակարգի գործունեության մասին, լիազոր մարմին ներկայացնել կենսաթոշակային ապահովության հարցերին վերաբերող դիմումներ,

2) լիազոր մարմնից ստանալ շտեմարանի՝ իրենց վերաբերող տվյալներ և դրանք փոփոխելու մասին առաջարկություններ ներկայացնել լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով,

3) դիմել լիազոր մարմին՝ իրենց կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար:

2. Ֆիզիկական ու իրավաբանական անձինք և կազմակերպությունները կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած փաստաթղթեր և հավաստի տվյալներ:

Հոդված 51. Կենսաթոշակառուի պարտականությունները

Կենսաթոշակառուն պարտավոր է՝

1) լիազոր մարմին ներկայացնել իրեն վերաբերող հավաստի տվյալներ,

2) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել կենսաթոշակի չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն:

Սույն հոդվածով սահմանված՝ պարտականությունները չկատարելու հետևանքով կենսաթոշակառուին ավել վճարված գումարները ենթակա են հետգանձման սույն օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով, կամ դատարանի վճռի հիման վրա, եթե դադարել է կենսաթոշակ ստանալու՝ անձի իրավունքը:

Հոդված 52. Կենսաթոշակին վերաբերող որոշումները բողոքարկելը

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել վերադատության կամ դատական կարգով:

Հոդված 53. Պատասխանատվությունը կենսաթոշակային ապահովության օրենսդրությունը խախտելու համար

Կենսաթոշակային ապահովության օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությունը սահմանվում է օրենքով:

Հոդված 54. Օրենքի կիրառմանը վերաբերող գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառմանը վերաբերող գերատեսչական նորմատիվ ակտերն իր իրավասության շրջանակում ընդունում է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը:

ԵԶՐԱՓՈՒԿՈՎ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 55. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (19-ը նոյեմբերի 2002 թվականի, ՀՕ-519):

Հոդված 56. Անցումային դրույթներ

1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով: Այդ դեպքում կենսաթոշակի գործում առկա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժում առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածը, քաղաքացիական ավիացիայի աշխատողների՝ թռիչքային ժամերով հաշվարկված ժամկետները, վկայությամբ հաստատված ժամանակահատվածը, երեխաների խնամքի ժամանակահատվածը, ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածն աշխատանքային ստաժի մեջ պահպանվում են նույնությամբ:

2021 թվականից սոցիալական կենսաթոշակի չափը կազմում է հիմնական կենսաթոշակի 80 տոկոսը:

2. Մինչև 2012 թվականը՝ թաղման նպաստի չափը սահմանվում է հիմնական կենսաթոշակի քսանհինգապատիկի չափով:

3. Պետական կենսաթոշակային ապահովության համակարգում տվյալների շտեմարան ներառվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազա և կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում տվյալներն ամբողջացվում են (այդ թվում՝ 2010 թվականի տվյալները լիազոր մարմին են ներկայացվում) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածի համար չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են երեք տարուց ոչ ավելի ժամանակահատվածի համար:

6. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը մահացած զինվորական կենսաթոշակառուի և սույն օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նախկին զինծառայողի հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստը վճարվում է սույն օրենքով սահմանված չափով՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: